

Մեմինարիայի և ինստիտուտի ավարտական միջոցառումների ուղեցույց

Փետրվար, 2021 թ.

Մեմինարիայի և ինստիտուտի ապարտական միջոցառումների ուղեցույց

Հրատարակված է

Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ընդունվում են դիտողություններ և ուղղումներ: Խնդրում ենք ուղարկել դիտողությունները,
այդ թվում՝ սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Information Services
50 East North Temple Street
Salt Lake City, Utah 84150-0009
USA

Էլեկտրոնային փոստ. si-information@ChurchofJesusChrist.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, հասցեն, ծովան կամ ճյուղը և ցիցը կամ շրջանը:
Ձեր մեկնաբանության հետ մեկտեղ չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը:
Ս&Ի տարբերակ 2, 2/20

Անհատները կարող են տպել այս նյութը իրենց անձնական, ոչ առևտրային նպատակով օգտագործման համար
(օգտագործումը կարող է կապված լինել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում նրանց կոչման
կամ հանձնարարության հետ): Ցանկացած այլ նպատակով օգտագործելու համար խնդրում ենք թույլտվություն
խնդրել permissions.ChurchofJesusChrist.org կայքում:

© 2021 by Intellectual Reserve, Inc.

All rights reserved

Տարբերակ. 8/20

Թարգմանության բնագիրը *A Guide to Seminary and Institute Graduation Exercises*

Armenian

PD00000906 201

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Բովանդակություն

Ցգի սեմինարիայի ավարտականի ուղեցույց	1
Ինստիտուտի ավարտականի ընթացակարգերը	5

Ցցի սեմինարիայի ավարտականի ուղեցույց

Ավարտականի ուղեցույց

- Ավարտական միջոցառումների անցկացումը սեմինարիայի բոլոր ուսանողների ջանքերը և ձեռքբերումները խրախուսելու եղանակ է:
- Սեմինարիայի ավարտականը պետք է անցկացվի ամեն տարի ցցի մակարդակով:
- Սեմինարիայի ավարտականի համար ուսանողը պետք է ավարտի սեմինարիայի ութ կիսամյակները և ստանա արժանավորության հաստատում:
 - Ուսումնական դասընթացն ավարտելու համար ուսանողները պետք է ներկա լինեն դասերի առնվազն 75 տոկոսին, սեմինարիայի կիսամյակի օրացուցային օրերի առնվազն 75 տոկոսի ընթացքում կարդան սուրբ գրությունների գիրքը և ավարտեն դասընթացի ուսման գնահատումը առնվազն 75 տոկոսով:
 - Նրանք, ովքեր կձախողեն այս պահանջները, վերահանձնելու հնարավորություն կունենան:
- Սեմինարիայի վկայագրերի վրա լինում են միայն Եկեղեցու կրթական խորհրդի նախագահի և Սեմինարիայի և կրոնի ինստիտուտների (ՍԻ) կառավարչի ստորագրությունները:
- Հնարավորության դեպքում, սեմինարիայի ավարտականը չպետք է անցկացվի ուսումնական տարվա ավարտից շուտ, որպեսզի վկայագրերը հանձնվեն ավարտական միջոցառման ժամանակ: Վկայագրերը տրվում են ցցի ներկայացուցչին (սովորաբար, նշանակված բարձրագույն խորհրդականին), որպեսզի վերջինս հանձնի դրանք ցցի սեմինարիայի ավարտականի ժամանակ:
- Եթե սեմինարիայի ավարտականն անցկացվում է ուսումնական տարվա ավարտից շուտ, շրջանավարտները կարող են ներկայացվել, ստանալով դատարկ վկայագրերի շապիկները: Երբ վկայագրերը պատրաստ լինեն, դրանք կարող են փոստով ուղարկվել շրջանավարտներին կամ փոխանցվել ցցի կամ ծխի ղեկավարներին, որպեսզի նրանք տրամադրեն ուսանողներին:
- Արժանավորության հաստատում չստացած ուսանողների վկայագրերը տրվում են եպիսկոպոսներին, որպեսզի ավելի ուշ հանձնեն այդ ուսանողներին: Արժանավորության հաստատում չստացած սեմինարիայի ուսանողները ավարտական միջոցառման ժամանակ չեն ներկայացվում:

Ավարտական հավաստագրեր

Ավարտական հավաստագրերը շնորհվում են ուսանողներին սեմինարիայի կիսամյակն ավարտելու համար, եթե նրանք ներկա են գտնվել դասերի առնվազն 75 տոկոսին, սեմինարիայի կիսամյակի օրացուցային օրերի առնվազն 75 տոկոսի ընթացքում կարդացել են սուրբ գրությունների գիրքը, և դասընթացի ուսման գնահատումը ավարտել են առնվազն 75 տոկոսով:

Ցցի կարիքներից ելնելով, սեմինարիաների տեղական ծրագրի կառավարիչները, խորհրդակցելով ցցի ղեկավարներին հետ, որոշում են, թե, երբ և որտեղ են ավարտական հավաստագրերը տպագրվելու և հանձնվելու: Ավարտական հավաստագրերը կարող են տպվել և հանձնվել յուրաքանչյուր կիսամյակի վերջում, յուրաքանչյուր տարվա վերջում կամ ընդհանրապես չհանձնվել: Հավաստագրերը կարող են տրվել սեմինարիայի ավարտականի ժամանակ, սեմինարիայի դասերին կամ այլ կերպ:

Դերեր և պարտականություններ

Ցցի նախագահը.

- Խորհրդակցում է ցցի կողմից նշանակված սեմինարիայի տնօրենի կամ համակարգողի հետ՝ սեմինարիայի ավարտական միջոցառումը կազմակերպելու և ծրագրելու համար:
- Վերահսկում է շրջանավարտների արժանավորության հաստատման գործընթացը:
- Հանձնարարում է ցցի սեմինարիայի ղեկավարին կամ բարձրագույն խորհրդականին համակարգել ցցի սեմինարիայի ավարտական ծրագիրը:

Եպիսկոպոսը.

- Որոշում է կայացնում սեմինարիայի յուրաքանչյուր շրջանավարտի հաստատման վերաբերյալ: Ուսանողների հաստատման կարգավիճակը չպետք է երևա սեմինարիայի ծրագրերում:
- Տեղեկացնում է սեմինարիայի ուսանողին, ով արժանավորության հաստատում չի ստացել, և բացատրում պատճառները: Եպիսկոպոսը հատուկ հոգատարությամբ պետք է տեղեկացնի ուսանողի ծնողներին կամ խնամակալներին, եթե ուսանողը չի մասնակցելու սեմինարիայի ավարտական ծրագրին:
- Ցցի նախագահին ցուցակ է տրամադրում արժանավորության հաստատում ստացած ուսանողների մասին, որպեսզի ներառվեն ցցի ավարտական ծրագրում:

Սեմինարիայում արժանավորության հաստատումը

Ցցերի նախագահների և եպիսկոպոսների համար.

- Սեմինարիան ավարտող ուսանողին տրվող եպիսկոպոսի հաստատումը «վկայում է, որ ուսանողն արժանավոր է և հավատարիմ է լինելու ավետարանի չափանիշներին» (*Ընդհանուր ձեռնարկ. Ժառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում* [2020], 15.1.5, ChurchofJesusChrist.org):
- Եպիսկոպոսը կամ նրա խորհրդականներից մեկը կարող է որպես հիմք ընդունել երիտասարդների հետ կանոնավոր անցկացվող հարցազրույցները, որպեսզի որոշի ավարտող ուսանողի արժանավորության հաստատման հարցը: Կարիք չկա, որ այդ ուսանողների համար անցկացվի արժանավորության հաստատման առանձին հարցազրույց:
- Եպիսկոպոսն իր հայեցողությամբ կարող է որոշել յուրաքանչյուր շրջանավարտի արժանավորության հաստատման հարցը:
- Սեմինարիայի տնօրենները կամ համակարգողները հավաստիանում են, որ յուրաքանչյուր ցցի նախագահ հասկանում է սեմինարիայի շրջանավարտ դառնալու արժանավորության հաստատման պահանջը:
- Ցցի նախագահը հավաստիանում է, որ յուրաքանչյուր եպիսկոպոս կամ ճյուղի նախագահ հասկանում է սեմինարիայի շրջանավարտ դառնալու արժանավորության հաստատման պահանջը:
- Միայն հաստատման արժանացած ուսանողները, ովքեր ուսման առաջադիմությամբ համապատասխանում են վկայագիր ստանալու պահանջներին, պետք է ներկայացվեն ցցի սեմինարիայի ավարտական միջոցառման ժամանակ:

Սեմինարիայի ավարտական ծրագրի օրինակ

[Ցցի անունը]

Սեմինարիայի ավարտական միջոցառում

[Օրը/Ժամը (ցանկալի տևողությունը՝ 1ժամ)]

[Վայր]

Նախագահող.

Վարող.

Դաշնակահար.

Խմբավար.

Բարի գալուստ.

Բացման օրհներգ.

Բացման աղոթք.

Մի քանի խոսք սեմինարիայի ծրագրում մասնակցության մասին.

Ելույթ ունեցող ուսանող (մեկ կամ մի քանի հոգի).

Երաժշտական համար.

Ելույթ ունեցող ուսանող (մեկ կամ մի քանի հոգի).

Կարճ ելույթ Ս&Ի ներկայացուցչի կողմից.

Ելույթ ցցի նախագահության անդամի կողմից.

Սեմինարիայի վկայագրերի հանձնում.

Փակման օրհներգ.

Փակման աղոթք.

Հետևյալ անունները առաջարկվում են ներառել տպված ծրագրում.

- Տարածքային նախագահություն (եթե առկա է)
- Միսիայի նախագահություն (եթե առկա է)
- Ցցի նախագահություն
- Եպիսկոպոսներ կամ ճյուղերի նախագահներ
- Եկեղեցու Կրթության Խորհուրդ
- Եկեղեցու կրթական համակարգի հանձնակատար
- Սեմինարիաների և կրոնի ինստիտուտների կառավարիչ
- Սեմինարիաների և կրոնի ինստիտուտների տարածքային տնօրեն
- Սեմինարիաների և կրոնի ինստիտուտների տարածաշրջանային տնօրեն

Ինստիտուտի ավարտականի ընթացակարգերը

Նշում. Երբ ստորև նշվում են եպիսկոպոսները և ցցերի նախագահները, դա համապատասխանաբար վերաբերում է նաև ճյուղերի նախագահներին և շրջանների նախագահներին:

Ուղեցույցները

- Տարեվերջյան ավարտական միջոցառումների անցկացումը ինստիտուտի ուսանողների ջանքերը և ձեռքբերումները խրախուսելու մի եղանակ է:
- Ավարտական միջոցառումները պետք է անցկացվեն ամեն տարի:
- Ինստիտուտի ավարտական միջոցառումները պետք է անցկացվեն ինստիտուտի շենքում կամ ցցի միջոցառման մակարդակով: Սա նաև թույլ է տալիս, որ ցցի ծրագրերը համատեղվեն ինստիտուտի շենքում անցկացվող ծրագրերի և ավարտական արարողությունների հետ կապված ցցի այլ ծրագրերի հետ՝ ինչպես հարմար կգտնեն տեղի կառավարիչները և ղեկավարները:
- Հնարավորության դեպքում ավարտական արարողությունները պետք է անցկացվեն ուսումնական տարվա ավարտից հետո:
- Եթե որոշվում է, որ ավարտական արարողություններ չեն անցկացվի, հաստատված ուսանողները կարող են պահանջել վկայականները, որոնք կտրվեն համաձայն ինստիտուտի ծրագրերի՝ ուսումնական տարվա ավարտից հետո:
- Ավարտական որակավորում ունեցող ուսանողները պետք է ավարտեն և ստանան ինստիտուտի դասընթացների առնվազն 14 միավոր. 4-ը՝ հիմնական դասընթացից (ընդհանուր 8 միավոր) և 3-ը՝ ընտրովի դասընթացից (ընդհանուր 6 միավոր):
- Դասընթացն ավարտելու համար ուսանողները պետք է բավարարեն (1) հաճախելիության, (2) դասընթացում հանձնարարված ընթերցանության և (3) Ուսումնական փորձառության բարելավման (ՈՒՓԲ) պահանջները: Այն ուսանողները, ովքեր չեն բավարարի այս երեք պահանջները, վերահանձնման հնարավորություն կունենան: Ավարտական քննությունների մասնակիցները պետք է դիմեն ավարտական վկայական ստանալու համար:
- Ավարտական քննությունների մասնակիցները պետք է ձեռք բերեն եկեղեցու ղեկավարի հաստատումը՝ ավարտական դիմումը լրացնելիս:
- Վկայականների վրա լինում են միայն Եկեղեցու Կրթական Խորհրդի նախագահի և Սեմինարիայի և կրոնի ինստիտուտների (Ս&Ի) կառավարիչի նախապես տպված ստորագրությունները:
- Ցանկության դեպքում, ամենամյա ավարտական արարողության ընթացքում ինստիտուտի ղեկավարները կարող են ընտրողաբար ներկայացնել այն ուսանողներին, ովքեր ստացել են ավարտական հավաստագիր կամ մասնակցության հավաստագիր:

Դերեր և պարտականություններ

Ցցի նախագահը, ով ներկայումս հանդիսանում է Ինստիտուտի Խորհրդի Խորհրդատու (ԻԽԽ) (տես *Ձեռնարկ 1. Ցցի նախագահներ և Եպիսկոպոսներ [2010], 11.2.2*) կամ նրա կողմից նշանակված անձը.

- Խորհրդակցում է ինստիտուտի տվյալ տարածքի տնօրենի հետ՝ նախապատրաստելով և ծրագրելով ավարտական միջոցառումը:
- Հաստատում է ավարտականի վերջնական ծրագիրը:
- Կարող է ելույթ ունենալ ավարտական միջոցառման ժամանակ և կարող է աջակցել ավարտողներին ներկայացնելիս և վկայականներ հանձնելիս:

Բոլոր ցցերի նախագահները կամ նրանց կողմից նշանակված անձինք.

- Համոզվեն, որ եպիսկոպոսները հասկանում են եկեղեցու ղեկավարի հաստատման պահանջը՝ ինչպես բացատրել է ինստիտուտի տնօրենը: Ուսանողները պետք է ձգտեն ստանալ եկեղեցու ղեկավարի հաստատումը՝ ավարտական դիմումը լրացնելու համար:
- Պետք է հասկանան, որ նրանք կարող են ստանալ բազմաթիվ նամակագրություններ ինստիտուտի բազմաթիվ ծրագրերից, կախված նրանից, թե իրենց ցցում չափաիաս երիտասարդները որտեղ են հաճախում ինստիտուտ:
- Մասնակցեն ավարտական միջոցառմանը՝ աջակցելով ցցի անդամներին իրենց ձեռքբերումներում:
- Հրավիրվում են նստելու բեմահարթակում, եթե ունեն ուսանողներ, ովքեր մասնակցում են ավարտական միջոցառմանը:

Եպիսկոպոսը կամ նրա խորհրդականներից մեկը.

- Հաստատում է ավարտողներին, երբ յուրաքանչյուր ուսանող ձգտում է ստանալ եկեղեցու ղեկավարի հաստատումը:
- Ըստ իր հայեցողության, կարող է ընտրել հաստատել կամ չհաստատել յուրաքանչյուր դիմորդի: Եթե եպիսկոպոսը կամ նրա խորհրդականը չեն ստորագրում ուսանողի եկեղեցու ղեկավարի հաստատումը ավարտականի դիմումի վրա, դիմումը թերի է, և ուսանողը չի ներկայացվի ավարտական միջոցառման ժամանակ:
- Պարտավոր է տեղեկացնել ինստիտուտն ավարտող դիմորդներին, եթե դիմորդը հաստատման չի արժանանում, և բացատրել, թե ինչու:
- Հրավիրվում է մասնակցելու ավարտական միջոցառմանը, եթե նա ունի ավարտական միջոցառմանը մասնակցող ուսանողներ, աջակցելով ցցի անդամներին իրենց ձեռքբերումներում:

Եկեղեցու ղեկավարի հաստատումը ինստիտուտում

Ինստիտուտի տնօրենը.

- Համոզվում է, որ յուրաքանչյուր ցցի նախագահի հասկանում է եկեղեցու ղեկավարի հաստատման պահանջը ինստիտուտն ավարտելու համար:

Ցցի նախագահը կամ նրա կողմից նշանակված անձը.

- Համոզվում է, որ յուրաքանչյուր եպիսկոպոս նույնպես հասկանում է այդ պահանջը:

Եպիսկոպոսը կամ նրա խորհրդականներից մեկը.

- Հանդիպում է յուրաքանչյուր դիմորդի հետ: Եթե ուսանողը ինստիտուտն ավարտելու համար արժանանում է հաստատման, դա ցույց է տալիս, որ ուսանողը հասկանում է և ձգտում է կիրառել Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները և վարդապետությունը, որ սովորել է ինստիտուտում, «հաստատելով, որ ուսանողները արժանի են և նվիրված՝ ապրելու սկզբունքներով, որոնք նշված են *«Երիտասարդներին գորացնելու համար»* գրքույկում, կամ Երիտասարդ ամուրիների համար նախատեսված նմանատիպ չափանիշներով» (Չեռնարկ 1, 11.2.3):
- Կարող է որպես հիմք օգտագործել չափահաս երիտասարդների կանոնավոր ծրագրած հարցազրույցները, որպեսզի հաստատի կամ չհաստատի շրջանավարտին: Ինստիտուտի շրջանավարտների համար կարիք չկա առանձին եկեղեցական հաստատման հարցազրույց անցկացնել:
- Ըստ իր հայեցողության, կարող է ընտրել հաստատել կամ չհաստատել յուրաքանչյուր դիմորդի: Եթե եպիսկոպոսը կամ նրա խորհրդականը չեն ստորագրում ուսանողի եկեղեցու ղեկավարի հաստատումը ավարտականի դիմումի վրա, դիմումը թերի է, և ուսանողը չի ներկայացվի ավարտական միջոցառման ժամանակ:
- Պարտավոր է տեղեկացնել ինստիտուտն ավարտող դիմորդներին, եթե դիմորդը հաստատման չի արժանանում, և բացատրել, թե ինչու:

